


14019

1916



h.v.


2803

ԳԱԳԻԿ ՄԻԽԻԹ-ԱՐԵԱՆ


Հ-532₂

891.99

15-79



ՊՍԿԻ ԵՐԱՇԽՆԵՐ



ԴՐՔՈՅՑԿԻՍ ՎԱՃԱՌՈՒՄԻՑ ԳՈՅԱՑԱԾ
ՕԳՈՒՏԸ ՑԱՏԿԱՑԻՈՒՄ Է ԱՅՆ ՀԵ-
ՐՈՍՆԵՐԻ ԶԱՒԱԿՆԵՐԻ ՕԳՏԻՆ, ՈՐՈՒՔ
ԶՈՒԵԼ ԵՆ ԻՐԵՆՑ ԿԵԱՆՔԸ ՀԱՅՐԵՆԻ-
ՔԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ:

1064/15/14



20860

14287

Նոր-Նախիջևան
Տպ. Ա. Յ. Ահարոնին

1916

Нахичевань и-Д.
Тип. С. Я. АВАКОВА

ՀԱՐՄ.

ԱՆՄԱՀ ՀԵՐՈՍՆԵՐԻ
ՅԻՇԱՏԱԿԻՆ

Դուք՝ որ Ազատութեան վառ յոյսերով տոգորուած,
առիւծի պէս ոլացաք դէպի «զուլում»-ի երկիրը, Զեր
կիանըի գնով փրկելու անիրաւ տաճկի ծանր լծի տակ,
դարերի ընթացքում տառապող հայ եղբայրներին, Դուք՝
որ արհամարհելով կեանքի քաղցր վայելքներ, գնացիք և
հերոսաբար ընկաք ազատութեան ճանապարհին՝ Զեր, ով
սիրելի հերոսներ, Զեր յիշատակին եմ նուիրում այս փոք-
րիկ աշխատութիւնս.


Փառք և պատիւ Զեզ...

Պ. Ա.

69837-6.7.



1942-63



ԽԱՅ. №

ԻՐԱԿԱՆԱՑՔ ՈՍԿԻ ԵՐԱԶՆԵՐ...

Իրականացէք ոսկի երազներ
Լուսնաշող անդորր պարզ գիշերների,
Վերադաբէք ինձ, իմ մոռացուած սէր,
Իմ կեանքի գարուն, որրան տենչերի...

Իրականացէք ինձ, մոռացուած սէր,
Տուէք նոր ժաղիս, նոր յոյս իմ սրտին,
Ծաղկաշատ հովտում սիրուն վաթանիս՝
Թողէք որ հնչուի վառ երգս կրկին...

Թողէք որ երգս գտնի արձագանք
Այն խուլ լեռներում, մթին ձորերում՝
Ուր որ լաւում է խեղճի հեծեծանք,
Ուր որ թշուառն է իւր օրը սրգում...

Իրականացէք ոսկի երազներ,
Պանդուխտ, հալածուած եղբայրս կրկին
Թող վերադառնայ իւր վաթանն աւեր,
Ու շնորջը խմբէ մերկ գաւակներին...

Թող կրկին վայլէ արտերում ազատ,
Հայ շինականի գերանդին վայլուն,
Ու հայ գեղջկուհու երգը հարազատ
Հնչուին սարերում, ուրմիս, զգայնւն...

Թող նոր արշալոյս ծագէ մեզ համար,
Յոյսին, տենչերին, գարուն բաղդաբեր,
Տաւիղը սիրոյ՝ հնչէ ոսկելար,
Իրականացէք ոսկի երազներ...



ՂԱՐԻՊ ԱՆՑՈՒՐԴԻՆ

Ծեծիր գուռլս մըրկայոյդ զիշերին՝
Երբ իմ գոնից անցնիս մենակ ու յոդնած,
Երբ փոթորիկն շառաչւնով կատաղած՝
Յուզէ հոգիդ՝ ծեծիր գուռլս, իմ անգին...

Ծեծիր գուռլս, ես քեզ համար միշտ ունիմ
Մի տաք անկիւն, սառնորակ ջուր ու չոր հաց,
Ծեծիր գուռլս, կը բացուի, իմ մտերիմ,
Ու վատերը կըմեզմանան անկասկած...

Վանիր քեզնից ծանը վիշտը դարեսր,
Անտուն-անտէր բաւ է ման զաս սղալով,
Ծեծիր գուռլս, աչքս ճամբիդ հեռաւոր՝
Վառ կարօտով քեզ կսպասեմ օրերով...

Տանջուած հոգիդ թող մի բոպէ յարկիս տակ՝
Վառ օրերի երազներով յագենայ,
Ես օտար չեմ, օ... ներս մտիր համարձակ,
Ղարիր ախպէր, սիրոս առանց քեզ կերերայ...

Արցունքը քեզ չի տալ երբէք փրկութիւն,
Ոչ էլ խնդրանք ու ստրկի աղաչանք.
Քո փրկիչն է զէնքիդ շաչիւն ու գոչիւն՝
Դէպի յառաջ, դէպի կոյւ, դէպի կեանք...

Ես կըվառեմ մի նոր կրակ քո սրտում՝
Ազատութեան մի նոր յայս կըներշնչեմ,
Թռդ մահակիդ փոխան փայլեն քո ձեռքում՝
Սուր ու հրացան, որ դու կռուիս տաճկի դէմ...

Օտարութեան մէջ դու որքան արջեցիր
Անգութ տաճկից տարիներով հալածուած՝
Բաւ է, այժմ առիւծի պէս սլացիր
Յէտ լուելու իրաւունքդ կաշկանդուած...

Ծեծիր գուռլս մըրկայոյդ զիշերին՝
Երբ իմ գոնից անցնիս մենակ ու յոդնած,
Երբ փոթորիկն շառաչւնով կատաղած՝
Յուզէ հոգիդ՝ ծեծիր գուռլս, իմ անգին...



ԿՈՌԻՒԻՌ ՀԱՅ ԶԻՅ ԶԻՆՈՒՈՐ...

(Նուէր հայ զինուորներին)

Կոսւէր հայ զինուոր հոգով քաջարի՝
Արցունքի ծովում յոյսն է շողջողում,
Գալիս է վախճանն արիւն օրերի,
Նոր կնանքի դարնան զանգն է զօղանջում...

Աթափուիր քնից, ծանր, դարաւոր,
Արբիր աշըերդ, առ քո հրացան՝
Ու նետուիր կուում ահեղ, ահաւոր
Փշելու բազկիդ ամբակուռ շղթան...

Արցունք, հառաչանք, խնդրանք, միս ու վախ
Մոռացիր, վանիր, սրտէդ յաւիտեան,
Եղիր քաջազուն, փոթորկունդ, անվախ,
Ու կեանքիդ գնով հարթիր քո ճամբան...

Մինչե Երբ մնաս ստրուկ դու տաճկին՝
Թոյնը սև կեանքի մինչե Երբ ծծես,
Եւ հայրենիքիդ աւերակներին՝
Մինչե Երբ լինիս դու ականատես...

Հնչել է արդէն զանգը մեծ կռուի,
Սուրբ ազատութեան մեծ ժամն է հիմա.
Քո շըթունքներէն թող ազատ հնչուի
«Յառաջ ընկերներ, յաղթութիւն կամ մահ...».

Թող լնդմիշտ լոէ հեծեծանքն հայի՝
Եւ ուրախ երգը հնչուի սար ու ձոր,
Թող ծլին-ծաղկին դաշտերն ամայի,
Ու հայը շնչէ աղատ ու անդրը...

Երկնակամարից ամպերը մուայլ՝
Անյետանում են, տես կամաց-կամաց,
Եւ արշալոյսի շողը ոսկեփայլ՝
Լուսաւորում է ուղիղ անթափանց...

Կոռւիր հայ զինուոր հոգով քաջարի՝
Արցունքի ծովում յոյսն է շողշողում,
Գալիս է վախճանն արիւն օրերի,
Նոր կեանքի գարնան զանգն է դողանջում...



Հ Պ Ա Ժ Ե Ծ

Մայր իմ, աղօթիր... թող հողիդ տանջուած՝
Աղօթբների մէջ գանի սփոփանք.
Ես կերթամ ահա ուղիս երազած՝
Տնւր ինձ մայրական գթառատ օրհնանք
Ու միշտ աղօթիր...

Մանկութեան օրից, մայր իմ սիրտսուն,
Դու չէիր չոքած օրօրոցիս մօտ՝
Հօրըս վիշտն էիր պատմում ինձ անքուն,
Տանջանքը երգում սրտերի արնոտ...
Մայր իմ, աղօթիր...

Երգերդ մայր իմ, իմ հոգում տանջուած՝
Մարմնացան, դարձան կենդանի բողոք,
Ես կերթամ այստեղ, եղբօրս հիւծուած
Յաւը մեղմելու... իսկ դու ծնկաչոք
Մայր իմ, աղօթիր...

Ազօտ սենեակում խաղաղ զիշերին՝
Ընկղմուիր քո սուրբ աղօթբների մէջ,
Խնդրիր Արարչից նոր ոյժ մեր բազկին,
Ու մեր գարաւոր տանջանքներին վերջ...
Մայր իմ, աղօթիր...

Շառագունում է հորիզոնն ահա,
Լսմում ես... կռուի շեփորն է հնչում,
Մեր ազատութեան սուրբ ժամն է հիմա
Եղբայրներս են ինձ օգնութեան կանչում,
Մայր իմ, աղօթիր...

Հոգ չէ թէ մեռնիմ կռուում ահաւոր,
Քանի իմ սրտում կայ հաստատ հաւատ
Որ յաղթանակը մերն է վասաւոր...
Գէհ, մնաս բարեաւ, մայր անյուսահատ
Միայն աղօթիր...



ԵԼԻ ԱՅՆՊԵՍ...

(Զինուորի երազը)

Ելի այնպէս ես քեզ տեսայ երազում՝
Տիսուր, արտում, զունատ, կրկին գալկահար,
Չըկար հուրը քո ծով հոմայք աչերում,
Ելի այնպէս տանջըլում էիր ինձ համար...

Ելի այնպէս շուրջս գարուն ծաղկաբնյը,
Ելի այնպէս ամենքն ուրախ ցնծագին,
Բայց քեզ համար խորթ էին ամենքն, անհամբնը,
Վիշտ ունէիր, կըհեծէիր, իմ անդին...

Մօտեցար ինձ մութ զիշերին ախրամած,
Ու վշտահար տանջուած դէմքիս նայեցիր,

Ու յիշելով քաղցր օրերն մեր անցած՝
 Դու ժպտացիր, ինձ փարուեցիր ու լացիր...

 Ելի այնպէս սիրում էինք մենք միմեանց,
 Ու կտպէինք անհնդ, ուրախ, երջանիկ.
 Մեր չորս կողմը անուշ բնյրն էր բիւր ծաղկանց,
 Ծիծեռները քաղցր կերգէին մեզ նաև նաևիկ...

Բայց, երազս, ախ... չքացաւ յաւիտեան,
 Դու չըկայիր... մութն էր դաշտում ահաւոր,
 Շուրջս արիւն, շուրջս դէնքէր ցիրուցան՝
 Կըտնքայինք կոռուից յետոյ վիրաւոր...



ՃԱՆԱՊԱՐՀ ՏՈՒԵՔ...

Ճանապարհ տուէք, հերոսն է գալիս,
 Յաղթական, փայլուն ժպիտը դէմքին.
 Նա, որ հրաժեշտ տուած սին կեանքին՝
 Մահուան գնդակին կուրծքն էր տալիս՝
 Գալիս է ահա,
 Ճանապարհ տուէք..

Հպարտ, անյուղող, պարտքը կատարած,
 Որպէս հայրենի հարազատ զաւակ,
 Վարդի պէս կարմիր, վերքը կրծքի տակ,
 Վերադառնում է նա մարտից յոգնած.
 Ճանապարհ տուէք...

Հնչում է նրա երգը ուազմի,
 Լսում էք... երգն է այդ ազատութեան,
 Որ նա հիւսել է ուժով իւր բազկի,
 Փշել ամրակուռ շղթան բռնութեան.
 Ճանապարհ տուէք...

Ճանապարհ տուէք, որ արհամարհած
 Նա անյոյս, ունայն կեանքի վայելքներ,
 Գնաց գտնելու փառքը երազած,
 Փրկելու ճնշուած սուրբ իրաւունքներ.
 Ճանապարհ տուէք...

Ճանապարհ տուէք, հերոսն է գալիս,
 Յաղթական, փայլուն ժպիտը դէմքին.
 Նա արժանի է ձեր ծափին՝ գովքին
 Նա չէ վհատուել գոռ կուռոմ երբէք.
 Օ... գալիս է նա,
 Ճանապարհ տուէք...



ԱՐԾՈՒԻ ՎԻՇՏՀ

Սարերի արքան արծիւը հպարտ՝
 Նստած էր տիսուր լեռան կատարին,
 Նայում էր երկինք մութն ու միգապատ,
 Ու հեռուն մոյզը, յուզւում էր հոգին...

Կարմիր արկի ցոլքերը պայծառ,
 Էլ չէին երևում երկնակամարում.
 Մութն էր շուրջը, մահսասուռ, խաւար,
 Կարծես աշխարհի կեանքն էր մարում...
 Դաշտերում դալար, լոել էր իսպառ՝
 Ուրախ գեղջուկի խինդն ու երգն աղատ,
 Անցնում էին շարքով անթիւ, անհամար
 Ծիծեռները լուռ, տիսուր ու վըհատ...
 — Ի՞նչ է պատահել, հարց տուեց իլան
 Սարերի արքան արծիւը հըզօր,
 Ուր է կեանքն ուրախ համայն մարդկութեան,
 Ինչու աշխարհը տիսուր է այսօր...

Ի՞նչու երկինքը թխպոտ է այսօր,
 ինչու մոռյլ են լեռ, ձոր ու անտառ.
 Ինչու կարմիր են վտակներն այսօր,
 Կարծես լալիս են շուրջու վշտահար...:
 Լուռ կաց... ու անձայն հսկիր դու անքուն,
 Լսուեց վերեից նրան պատասխան.
 Մահն է թափառում հզօր ու դժգոյն,
 Ամբողջ մարդկութիւն փարուել է նրան...
 Այստեղ, ամենուր, քո ոտքերի տակ՝
 Գերեզմաններ կամ անթիւ շարէշար,
 Ողբերգ են երգում նրանց, դժնդակ՝
 Մահը քամու հետ ձուլուած, հաւասար...
 Մահն է թափառում, օ, մի խանզարիր—
 Լուռ հոգիների նիրհը անվրդով,
 Ժայիտ ու ծաղիկ էլ մի սպասիր,
 Կենսատու դարսուն դալու չէ շուտով...
 Միթէ չես տեսնում շուրջու ամայի,
 Արիւն լաց ու կոծ պատել է աշխարհ.
 Քանի ուստանէ շունչը սև մահի՝
 Դու մի սպասիր արև յուսավառ...
 Լացեց արծիւը... ու նայեց հեռուն՝
 Ցիշեց իւր երազ անցեալը կրկին.
 Եւ արցունքները աչքերին անքուն՝
 Ցուզուած ու խրսխտ մոնչաց ուժգին...
 —Մարերի արքան, որ գիտէր իշխել
 Լեռների վրայ ազատ ու անկախ՝
 Նա չի վհատուի, չըգիտէ տիրել,
 Նա դեռ պիտ ապրի երջանիկ խաղաղ...:
 Նա պիտ մարտնչէ մահուան դէմ հըզօր,
 Նա պիտ տապալէ թոյն ու բռնութիւն.
 Պիտի յաջորդէ այս կեանքին ժըխոր՝
 Մի նոր արշալնյս, մի նոր փրկութիւն...
 Լուց արծիւը... տիրուր, մաորուն՝
 Թռաւ դէպի մութ անյայտը, հեռուն...

Ք Ն Ա Բ Ի Ս

Քաղցրահնչիւն քո լարերին կրկին անգամ պիտ զարկեմ
 Ոգեսրուած վառ յոյսերով, սրտիդ լարերը շարժեմ,
 Հնչիր անուշ, ով իմ քնար, տուր արձագանք դարդերիս՝
 Աւրախութիւն ինձ ներշնչիր, վերջին տիսուր ժամերիս...
 Ես երգում եմ ցուը խեղճի, վիշտը որբի, տնանկի,
 Ես երգում եմ տառապանքը, էս մեր զուլում սև կեանքի.
 Զայնակցիր ինձ, ով իմ քնար, բաւ է որքան լոեցիր,
 Բաւ է որքան հառաչանքիս դու ունկնդիր մնացիր...
 Քո լարերը եկ, միացրու սրտիս քնրոյշ լարերին՝
 Երգենք անվերջ, ու երազենք, գարնան գալը վերստին,
 Յուսանք կրկին, ով իմ քնար, նոր կեանք, նոր բաղդ, նոր օրեր,
 Մեր սրտերից գուցէ վանուին՝ հառաչանքներ, կմկիծներ...
 Թողնենք տանջանք ու հառաչանք, երգենք գարնան վառ երգեր՝
 Երջանկութիւն, ծառ ու ծաղիկ, վարդ ու սոխակ, կոյսի սէր,
 Վիշտն, ասում են, վիշտ է բերում, նոր նոր ցաւեր մեր սրտին՝
 Պէտք չէ այսպէս յուսահատուել ու հեկեկալ տիրագին...
 Դէ, իմ քնար, հէրիք լոես, մասներիս տակ, սրտիս հետ՝
 Հնչիր զուարթ, մեղմ ու անուշ, քաղցրահնչիւն դու յաւետ,
 Քո երգերից գուցէ զարթնին վաղուց թմրած մեր սրտեր,
 Եւ ծիծաղի փոխուին ընդմիշտ մոայը թախծոտ մեր դէմքեր...



ՊԱՆԴՈՒԽԾԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Ես գալիս եմ ձեզ փարուելու,
 Ով ծաղկագարդ արօտներ,
 Գալիս եմ ձեզ նուիրելու,
 Իմ ջերմագին համբոյըներ...

Դաշտեր դալար վարդ ու շուշան
Քաղցրաբոյք վառ ծաղիկներ,
Գալիս եմ ձեզ բաժան-բաժան
Ցօղելու իմ արցունքներ...

Գալիս եմ, այ գեղջուկներ,
Զեր կարօտով պապակուած,
Զեր դարդերին լինել ընկեր,
Զեզ սիրելու երդըւած...

Ես գալիս եմ, էյ կարկաչուն,
Տուրտ, սառնորակ աղբիւրներ,
Զեր ափերին ես միշտ արթուն
Երդելու սէր—կոյսի սէր...

Ես գալիս եմ, ով մայր երկիր,
Քեզնից սնունդ խնդրելու,
Աչ գալիս եմ, ինձ ընդունիր
Գիրկդ ապրելու, մեռնելու.



ԴՈՆԻ ԱՓԻՆ

Վերջալոյսին նստած տխուր քո ափին
Արծաթափայլ ալիքներիդ կը նայեմ,
Անդրադարձումն վառ ու ցոլնւն աստղերի
Քո սառ ծոցում... ես գիշերուան կըսպասեմ...

Լուռ է շուրջս, գիշերային զով քամին
Քո հանդարտիկ ջրերիդ նետ կըխաղայ,
Ու մեղմօրէն բարև տալով տփերին
Ջրերիդ նետ նորից նա յետ կըսողայ...

Վերջալոյսի շողբերն անցան ջրիդ տակ՝
Աստղ ու լուսին պապղացին քո ծոցում,

Շառ ու ծաղիկ, բոյս ու ալիք՝ պաղ յստակ —
Կարօտ հողուս տուխն երազ, ցողացնւմ...

Ու այն պահին ես մոռացայ հառաչանք.
Ցնորքների մի աշխարհ կար իմ հանդէպ,
Ու նայում եմ ես հիացքով... ու տենչանք,
Մէր ու գգուանք գրկեց հոգիս ժպտագէմ...

Նաւակն անցաւ հանդալտ ջրի երեսից,
Ու ջութակի երգը հասաւ ականջիս.
Ո՞վ էր երգում սիրոյ երգը նաւակից,
Ո՞վ էր տալիս մեղմ արձագանք իմ կանչիս...

Լուռ է շուրջս, լուռ է նորից բնութիւն,
Մեղմ օրօրուող ալիքներին կընայեմ,
Խոր գիշերին յոյզը սրտիս ես անքուն՝
Ալիքներիդ սէրըս խառնել կերազեմ...



ՀԱՅՐԵՆԻՔԻՍ

Էլ չեմ երգի սուդ ու տանջանք, հայրենիք,
Հառաչանքդ անցած արիւն օրերի,
Որ քո սրտում չըդրոշմուի սև կնիք,
Վշտի կնիք, մի նոր գալիք ցաւերի...

Վերածնութիր, թէկ շուրջս կիսաւեր,
Բայց ամպերը չըկան գլխիդ կուտակուած.
Քեզ են գալիս, օհ, տեսնում ես, այն խմբեր —
Որդիքդ են քո հեռուից գալիս կտրօտա՛ծ...

Վերցրնւ քօղը քո սպաւոր աչքերէն,
Արշալոյսի շողքերն ընկան Մասիսին.
Քո որդիքդ արցունքներըդ կը որբեն,
Կըզարդարեն քեզ վարդերով մայիսին:

Վերածնուիր, սիրտ առ նորից ու հրճուիր,
Մենք պիտ ապրինք, պիտի ապրինք քո դրկում.
Ասպարէզդ բաց է, էլ մի ընկճուիր,
Վերածնուիր, կանգնիր կեանքի նոր շէմքում...:

Ու ժպտա մեղ, ժպտա մի նոր ժըպիտով,
Խչպէս մայրը իւր հարազատ զաւակին.
Կուզենք ապրել քեզ հետ ոսկէ յոյսերով,
Ու մոռանալ մեր անցեալը ցաւագին..:

Ել չեմ երգի սուզ ու տանջանք, հայրենիք,
Հառաչանքդ անցած արիւն օրերի,
Որ քո սրտում չըգրոշմուի ու կնիք,
Վշտի կնիք, մի նոր գալիք ցաւերի...:



Ն Բ Ա Ն

Կըգաս դու ինձ հետ, երբ մըրկայոյդ
Անողոք բաղդի ուժեղ հոսանքին
Վիճակուած լինիմ հետեւեալ անյոյս,
Եւ հպատակուել վշտին, տանջանքին...

Կըգաս դու ինձ հետ, երբ ալէծածան
Ծովի ալիքներն խլեն ինձ քեզնից,
Եւ ինձ սառ, թշուառ, անյայտ գերեզման
Հիւսելու կըգաս քո արցունքներից...

Կըգաս դու ինձ հետ, երբ մթին բանտում,
Ուր արև, լուսին չեն փայլում երբէք,
Անվերջ տառապիմ, ես դաժան կեանքում,
Կըգաս վանելու վշտերը մէկ-մէկ...

Կըգաս դու ինձ հետ, երբ ինձ վիճակուի
Թափառել անտուն օտար երկներ,

Քաղցած ու ծարտաւ, լուծը տանջանքի,
Տանել անալատունջ հալածանք օրեր...

Կըսիրեմ ես քեզ, աննման փէրի,
Ոըպէս սոխակը իւր վարդին—յաւէտ,
Տանջանքիս ժամին՝ արիւն օրերին՝
Օ՛... եթէ կըգաս, կըգաս դու ինձ հետ...



Գ Ի Ւ Ղ Է


Ի՞նչ հրաշալիք, ի՞նչ գեղեցկութիւն,
Փուուած է ահա աչքերիս առաջ,
Շուրջս լի ժպիտ, կանչ ու ցնծութիւն,
Ժառերի շշունջ, ջրերի կարկաշ...

Երկնքում կապոյտ, արևն է լողում,
Շողերը փոած երկրի վրայ,
Հասուն արտերում հասկերն են ծփում,
Մեղմիկ զեվիւոի շնչով անխընայ...

Ու լայնածաւալ սարերի լանջին՝
Գիւղն է հանգչում անհոգ ու խաղաղ,
Սահող վտակի մեղմիկ խոխոջին՝
Զայնակցում գեղջկի անուշ երգն ու տաղ...

Ծիծեռնակները պարզ ծլվլոցով՝
Տալիս են գիւղին կեանք ու բերկութիւն,
Հովիւն իւր անուշ սընդի ձայնով՝
Երգում իր եարի սև աչերն անքուն...

Երիկնադիմին նախիրը եկաւ,
Ողջ գիւղը լցուեց ախորժ բառաչով,
Զանգի զօղանջը հեռուում հանգաւ,
Ժամ շտապեցին կանայը երկիւղով...



Ի՞նչ հրաշալիք, ի՞նչ գեղեցկութիւն,
Փռուած է ահա աչքերիս առաջ.
Շուրջս լի ժպիտ, կա՞նչ ու ցնծութիւն,
Ծառերի շշունջ, ջրերի կարկաչ...



Բ Ա Ն Տ Ո Ւ Մ

Տխուր—տրտում
Մթին բանտում
Շղթայակապ ես ընկած՝
Տանջլուում եմ,
Լալիս, յուզեում
Օր ու արես խաւարած...

Անտուն, անտէր,
Անյոյս, անտէր,
Սիրտս է մաշուում, աղմկւում.
Սև անարգանք,
Բանտի կապանք,
Ոյժ փշրում՝ սպառում...

Ա՛խ ինձ համար
Մոայլ խաւար
Եկաւ՝ անցաւ այս աշխարհ,
Կեանքի գարուն՝
Որտի սիրուն՝
Ես չունեցայ ինձ համար...

Տուն ընտանիք,
Հէդ հայրենիք,
Էլ չէք աեսնիլ ինձ կենդան...
Մատաղ սլատիս,

Անյոյս կեանքիս,
Կըսպասէ շուտ գերեզման...
Անցաւ իմ վաս
Կեանքս պայծառ,
Էյ երջանիկ մանկութիւն...
Քեզ հետ անհետ
Կորաւ յաւէտ
Եւ սէր, և յայս, ցանկութիւն...



ԵԿՇՔ ԻՆՉ ՄՈՅ

Եկշք ինձ մօտ հոգուս կարօտ, փարուեցէք,
Զեր վշտերն ու հառաչանքներ մոռացէք.
Ես կըլինիմ ձեր վշտերին մխիթար,
Ես կըլինիմ կեանքի փարոս ձեզ համար...

Տխուր կեանքի սև ցաւերը նոր ու հին՝
Ա՛խ, մոռացէք, թող մթութեան մէջ կորչին,
Ես ձեզ կերգեմ սիրոյ երգեր վտո գարնան,
Ա՛խ, ես կըտամ ձեզ իմ սրտում հանգրուան...

Օ՛, իմ սիրտը կարօտ զարիք ճամբորդի,
Կը որոնէ անտուն-անտէր տանջուածի.
Ա՛խ, իմ հոգին չունի հանգիստ ու դադար,
Միշտ կաղօթէ՛ կըտանջուի ձեզ համար...

Եկշք ինձ մօտ... օ՛, ամեն օր, ամեն ժամ
Ես ձեզ կըտամ ոսկի յոյսեր անթառամ.
Կըմոռանանք արիւն, արցունիք ու կական,
Ես կըլինիմ ձեր ընկերը անբաժան...

ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻՆ

Ես չեմ հիւսի ձեզ արցունքներ՝
Իմ երգերից տխրագին,
Նահատակուած սուրբ եղբայրներ,
Փա՛ռը ձեզ, ձեր սուրբ աճիւնին...

Երբ գարուն դայ մեղմ հովերով,
Ծաղկափթիթ ժպտադէմ,
Կըգամ այցի ձեր շիրմի քով,
Ծունը դրած կաղօթեմ...

Ես չեմ սըգայ... այլ կերգեմ
Ազատութեան երգը ձեր՝
Որ մինչև մահ դուք ժպտադէմ
Կերգէիքանսկեհեր...

Որ մինչև մահ դուք անբաժան,
Սէրը դրկած հայրենի,
Գտաք կեանքին ձեր հանգրուան՝
Գնով փառքի, արիւնի...

Հպա՛րտ հոգին ձեր քաջարի՝
Օ՛... չի սիրում վիշտ ու լաց,
Թող լարերը իմ քնարի
Հնչեն երգեր վեհ, անլաց:

Ես չեմ հիւսի ձեզ արցունքներ՝
Իմ երգերից տխրագին,
Որ շրտիրի, նվ հերոսներ,
Ծըշտանայ ձեր հոգին...

Ի՞նչ բարեկարգ արքա ու առաքի

Ե Տ

Համեմ սկսի առաջ առ

Հ Զ Օ՛ Բ Ե Մ

Հզօր ես, հըզօր, սուրբ ազատութիւն,
Հըզօր ու շանթող մռայլ խաւարին,
Ոսկի շողերով հիւսուած քո անուն՝
Թող գրկէ, ցնծա, հրճուի մեր հոգին...

Թէկ քո ուղին փշոտ, աատասկոտ,
Մահուան ուղի է թուլամորթներին,
Մենք սիտ սլանանք քաջի պէս քեզ մօտ՝
Արհամարհելով խոստումները սին...

Թող մեր սիգապանծ լեռները ծածկուին
Արիւն—արցունքով մի վերջին անգամ.
Միայն թէ հասնինք մենք քո փէշերին,
Վայելենք սէրբով ջերմ ու անթառամ...

ՄԵնք, որ դարերով լացինք—սպացինք,
Տանջուեցինք անվերջ շղթաների մէջ՝
Օ՛... էլ չենք կարող, չէ, լաւ է մեռնինք,
Քան սարուկ մնանք թշնամուն անվերջ...

Հզօր ես, հըզօր, սուրբ ազատութիւն,
Հզօր ու շանթող մռայլ խաւարին,
Ոսկի շողերով հիւսուած քո անուն՝
Թող գրկէ, ցնծա, հրճուի մեր հոգին...

Յա միտ առարկ անու զ ու առաքի.



ԱՍԱՌ ԻՆՉ, ԴՈՒ ԶԵՄ...

Ասա ինձ, դու չես որ լուռ գիշերին՝
Որպէս սարերի սէզ յաւերժահարս՝
Ծաղկեայ պսակներ հիւսած քո զլիին
Ինձ ես որոնում, միշտ և հանապազ...

Հով զեփիւոի պէս մեղմիկ, նազանքով
Պարզ գիշերներին ազատ լեռներում
Դու չես, որ կուզես քո սե աչերով՝
Սուզուել ու հանգչել իմ սրախ խորքում...

Ասա ինձ, դու չես մթութեան միջից՝
Անձ օրօր երգում, օրօր քաղցրածայն,
Որ ես անջատուած իմ բիւր վշտերից՝
Ննջեմ, մոռանամ այս կեանքը ունայն...

Ասա ինձ, դու չես որ կուզես տալ ինձ
Քաղցր երազներ, ոսկի ապրումներ,
Եթէ անջատեմ սիրտս վշտերից՝
Ու նուիրեմ քեզ իմ տենչանք ու սէր...

Կանաչ սարերի թաւշեայ կատարին՝
Հէզ թշուառների արցունքից հետու՝
Ասա ինձ, ինչու դու կառուցիր սին
Ծաղկեայ՝ տընակդ մենութեան .. ինչու՝

Այնտեղ վեհ ծաղկանց բուրմունքով անուշ՝
Գիտեմ դու կուզես, որ ես արբենամ,
Քո կրծքին անհոգ ննջեմ ես մուշ-մուշ,
Թշուառին, որբին իսպառ մոռանամ...

Զէ, թող ինձ մենակ, մի որոնիր ինձ,
Իմ հոգիս չունի ոչ մի հանգըռուան,
Ես կուզեմ լինել խեղճին կարեկից,
Մէրըս էլ նրան տուի յաւիտեան...



ԵՍ Մէկին ԳիՏեՄ
Դոգիս մզր վասցի, տքոնե, չիմե, ևսց
Ես մէկին գիտեմ, սրբակեցնարկմաս ու յաւդյուն միոյ
Որպէս մայիսի պայծառառառաւօտ,

Փախոը դէմքին ազնիւ ու խոհեմ՝
Շրջում է անվերջ, ապրում է մեզ մօտ...

Աշխարհիս վրայ շրջում է նա միշտ,
Ընկած դոնէ-գուռ աղաչում մարդկանց,
Ընդունել իրեն, չեն ունենայ վիշտ,
Կըբացուի կեանքի գարունը նրանց..,

Բայց մարդիկ, որպէս չարի սարուկներ,
Սոսկ ատելութեամբ զինուած անարդար,
Միշտ հալածում են, դարերից ի վեր՝
Թոյն սերմանելով, թոյն իրենց համար...

Օ՛, մարդիկ, մարդիկ, բաւ է վերջապէս,
Արթնացէք քնից խաւար թմբութեան,
Եթէ կուզէք բաղդ, յոյսեր ոսկու պէս՝
Ճշմարտութիւնն է... սիրեցէք նրան..



Ե Ր Կ Զ Ի Ն

Չուզեմ լինել ես ունկընդիր
Քո հառաչող քնարին.
Կեանքի գարուն դու մեզ երգիր,
Մոռացիր այդ երգըդ հին...

Քո աչքերում թող չերկան՝
Սկ արցունքի կաթիլներ,
Որ երգիդ հետ, միշտ անբաժան՝
Կըհեղեղեն մեր սրտեր..

Քո երգերում լսուել է միշտ՝
Բողոք անդութ կեանքի դէմ,
Հառաչանքներ, անջանք ու վիշտ՝
Օ... բաւ է, թող չըլսեմ:

Հոգիս կարօտ ազատութեան
 Սրշալոյսին ոսկեյոյս,
 Կուզէ գրկել վեհ փրկութեան՝
 Երպըդ ուրախ ու անոյշ...

 Նուրբ լարերը քո քնարի,
 Մատներիդ տակ դողդոջուն,
 Հնչեն երգը թող քաջերի՝
 Երպըդ խրոխտ, զգայուն...

Ու այսուհետև քնարիդ հետ,
 Քաղցրանուագ սսկելար,
 Երգիր ուրախ, միշտ և յաւէտ
 Նոր բաղդ, նոր կեանք մեզ համար...



ԱՄԱՌԱՆՈՅՈՒՄ

Հպմբատ լեռների ծաղկաւէտ կըծքին՝
 Հոգսերից ազատ հանգչում եմ հիմա,
 Հովերն են գալիս շոյում իմ դէմքին,
 Ծաղկանց բուրժունքն եմ ես շնչում անմահ...

 Զուլալ ջրերի քրքիջներն ուրմախ՝
 Սրաս են լցնում երգերով անուշ,
 Ծիծեռնակների ճախրումից խիզախ՝
 Ննջում եմ անհոգ, ես հանգիստ, մուշ-մուշ...

Ահա գառների երամն է գալիս,
 Հովուի սրնգի անուշ երգի տակ,
 Առոյգ ու զուարթ մերթ պար են գալիս
 Ու մերթ ձայնակցում երգին համարձակ.

Ամբոխը ուրախ, իրիկնաղիմին՝
 Բուժիչ ջրերից զով – առոյգացած՝
 Բարեներ տալով լուսնի շողերին
 Քայլում են ուրախ, թև-թեի տուած...:

Ջեփիւող անուշ շոյում է մեղմիկ,
 Խաղում ծառերի տերեների հետ,
 Ալս... որքան լաւ է այսպէս, երջանիկ՝
 Ապրել ու շնչել, ազատ, միշտ, յաւէտ...



ԹՈՂԷՐԻ ԻՆՉ ՄԵՆԱԿ...

Թողէր ինձ մենակ, վշտերից ազատ՝
 Ազատ աշխարհի պէս-պէս ցաւերից՝
 Միայնութեան մէջ հոգով հարազատ
 Պսակներ հիւսեմ սիրոյ երգերից...

Թոչնիկների հետ ապրիմ ու ճախրեմ
 Ազատ լիռների ոսկեզօծ լանջին,
 Վասնկների մօտ ունկնդիր լինեմ՝
 Նոցա երգեցիկ, մեղմիկյկարկաչին...:

Թողէր ինձ մենակ... ծաղիկների մէջ,
 Անուշ երգերով խօսիմ նոցա հետ,
 Նուիրեմ նոցա համբոյլներս անվերջ,
 Նոցա հետ ապրիմ, երջանիկ յաւէտ...

Զըկայ այնտեղ սէր, ուր կայ չարութիւն,
 Անսէր մարդկանց մէջ չեմ կարող ապրել,
 Թողէր ինձ մենակ դաշտերում սիրուն,
 Անհոգ ու անվիշտ կուգեմ թափառել...

Թողէք ինձ մենակ, օ... լու է այնտեղ,
Զըկայ տառապանք, ժպիան է ինձ հետ,
Կապրիմ նոցա հետ, կըմեռիմ այնտեղ,
Ուր սէրն է շըջում, շնչում միշտ յաւէտ...



Ի՞՞Չ ՆՈՒԻՐԵՄ ՔԵԶ

Ալնաքամ սրտիս հառաչքը հանեմ
Արցունքով հանդերձ նուէլ տամ ես քեզ,
Ո՞հ... ծով դարդերի աւազանըն եմ,
Ես այլ բան չունիմ բացի արցունքէս ..

Կամ բիւր վշտերըս նուիրեմ ես քեզ,
Ո՞չ, առանց նըանց չեմ կարող ապրել.
Օ՛, կեանքի ստրուկ հեկեկանըն եմ ես,
Ինձ վիճակուած է միայն արտասուել...

Կամ թէ մի համբոյր նուիրեմ ես քեզ,
Որպէս հրաժեշտ այժմ և յաւիտեան,
Զէ, թոյն կըծըծես սառ շրթունքներէս,
Թող ցաւերիս հետ մանիմ գերեզման...

Բայց երբ կանաչով շիրիմս անշուք՝
Անփայլ ծաղկունքով ծածկած կըտեսնես,
Մօտեցիր, քաղիք, օ դու այն ծաղկունք,
Դիտցիր, որ այդ եմ նուիրում ես քեզ...



Ի՞՞Չ ՄԻՌ ԿԱՆՉԻՐ...

Ինձ մի կանչիր ով մահ, կուզեմ դեռ ապրել,
Դեռ իդերս մնացել են անկատար.

Դեռ թելերը սրտիս քնքոյշ, ոսկելար՝
Պիտի հնչեն խեղճի երպը անարդել...

Ինձ մի կանչիր, արցունքու ու սէր, տենչ ու յոյզ՝
Կուզեմ գրկել, կուզեմ ծծել, արքենալ,
Դեռ իմ սիրտս կուզէ յուսա՛լ ու յուսալ,
Որ պիտ ծագէ թշուառ կեանքիս արշալոյս...

Յօղ ու ծաղիկ, բոյր ու գգուանք սարերի՝
Պիտի բերեն մի նոր գարնն իմ հոգուն,
Մատաղ կոյսի հմայքն անքուն աչերուն՝
Պիտի խլեն համբոյրներն իմ շուբթերի...

Պիտ մաքառեմ ալիքներում դեռ կեանքի,
Ու իմ սիրտս շինեմ խեղճին մի տապան,
Անկուշտ ծովում մի ապահով օթկան,
Պիտ կարեկցեմ վշտին՝ որբի, տնանկի...

Բայց, երբ յոդնի մաքառումից իմ հոգին՝
Ու ջլատուի բազուկները իմ արի՝
Այնժամ, ով մահ, կըկանչեմ քեզ, թէ արի
Ու իմ սրտին խփիր քո սուր գերանդին...



ԵՄ ՍԻՐՈՒՄ ԵՄ...

Ես սիրում եմ երազ գիշեր,
Լուսին, տստղեր վառվուն,
Ես սիրում եմ սիրուն աչեր՝
Մութ ծովի պէս, լուռ, անքուն...

Ես սիրում եմ վառ արշալոյս,
Յօղ ու ծաղիկ քաղցրաբոյր.
Ես սիրում եմ միշտ տենչայոյզ՝
Գեղեցկութեան տալ համբոյր...

Ես սիրում եմ զով ու գեփիուռ,
Ծառեր շընկան ու անուշ,
Ծովի շշունջն եմ սիրում լուռ
Ալիքները մեղմ քնքոյշ.

Ես սիրում եմ կանաչ սարի՝
Ելեջը թաւշապատ.
Ես սիրում եմ պաղ աղբիւրի
Զուրը վճիտ ու տոտտ...

Ես սիրում եմ դայլայն անուշ
Անհոգ հովուխ սընդի.

Ես սիրում եմ մայիսն անուշ
Սիրուն փոքրիկ գառների:

Կուգէի անհոգ պարզ գիշերին
Գէթ մի վայրկեան ընդգրկել
Ծաղիկ, աղջիկ, աստղեր, լուսին,
Ապրել, տենչալ, երազել...



Ի Ն Զ Ո Ւ

Ինչու փշրեցիր յոյսերս երազ,
Յոյսերս սակի, տենչերս անմար,
Ծնեցիր դու իմ սրտում մատաղնաս
Իզձեր կենսալի, ու թողիր անցար...

Ինչու խոստացար սրտիս սոկելար՝
Քո երգն ու համբոյը, անս սկիկ աչեր,
Ու թողիր հոգիս անսէր ու անցար,
Գնացիր անդարձ դէպ մանթ հեռուներ...

Օ... ինչու, ասա, իմ հոգուն կտրօտ
Տուիր դու միայն, անս ակսումներ,

Տատանուող սրտիս, ուղիներ փշոտ,
Անքուն աչքերիս տանջող գիշերներ...

Դու կաշկանդեցիր իմ սիրտը սիրող,
Ցաւերժ արգելքի սոսկ շղթաներով,
Կտրեցիր լուրը քնարիս երգող,
Սիրտս դարձրիր հասաչանքի ծով...

Ա՛խ, սիրտս չուզէ ապրել անկենդան,
Շուրթերս թռումել առանց համբոյըի.
Հիւսուի վաղաժամ թող ինձ գերեզման,
Թող սիրտս տանջուող էլ չըբարախի..

Ինչու փշրեցիր յոյսերս երազ,
Ցոյսերս սոսկի, տենչերս անմար,
Ծնեցիր դու իմ սրտում մատաղնաս
Իզձեր կենսալի, ու թողիր անցար...



ՄԻԱՅՆ ՍԻՐԻԲ ԻՆՉ

(սիրավէպ)

Վարդի սիրահար սոխակի նման՝
Դու ինձ վեհ սիրոյ երգը երգեցիր,
Իմ մատաղ սրտում բիւրեղի նման՝
Քո վառ կայծերը սիրոյ նեաեցիր...

Լուսին ու աստղեր եղան լուռ վկայ՝
Մեր անկեղծ սիրոյն, այն պարզ գիշերին.
Շարանքը ծաղկանց, հոգից մեղմ անմահ՝
Օրօրւում, ժպտում էին մեր երեսին...

Մենք ամուսնացանք, ձեռք-ձեռքի պուինք,
Սիրով կապեցինք պայմանը կեանքի,

Անտրտունջ մինչ մահ տանել ուխտեցինք,
Տանջանք, հառաջանք, օրեր զրկանքի...

Բայց, աւաղ... անցա՞ն, անցան տարիներ,
Սէրըս իմ անբիծ, իսպա՞ո մոռացար,
Սիրեցիր ուրիշ սկիկ խենթաչեր՝
Իոկ ինձ հեգնեցիր անհող ու անցա՞ր...

Թողիր ինձ մենակ դու կեանքի շէմքում,
Անտուն ու անտէր սև վիշտը սրտիս՝
Ախ. . ուր թագցընեմ ցաւերս անպատում,
Ինչու ինձ թողիր արցունքն աչքերիս ...

Ինչպէս նաւակը տոանց նաւավար
Լողում է ծովում ալեաց խաղալիք՝
Այնպէս էլ դու ինձ թողիր հեռացար,
Որ ինձ խորտակէ կեանքի փոթորիկ...

Զեմ ուզում բեզնից զարդ ու զարդարանք,
Ի՞նչ է պճանանքը առանց սէր—կեանքի,
Ե՛կ, մօտեցիր ինձ, նորից միանանք,
Մոռացութեան տանք վիշտը անցեալի...

Ե՛կ, մօտեցիր ինձ, իմ հոգուս հատոր,
Քեզ եմ սպասում կրկին թեաբաց.
Քեզ համար կերգեմ նոր կեանքի օր-օր
Միայն սիրիր ինձ անկեղծ, անկասկած...



ՀՈՎՈՒԻ ՍԷՐԸ

Մաղախն ուսին, լեռան կրծքին
Հովիւն նատած սիրայոյգ,
Քաղցրանուագ շըւին ձեռքին
Նուագում էր մինչև լոյս...

Իսկ բազմերանդ գառնուկները՝
Նրա շուրջը բոլորուած,
Թուչկոտում էին, երգում սէրը,
Զորս բոլորը պար բանած...

Նա երգում էր մի շատ հին երգ,
Մի եղանակ քրդական,
Եարին ուզզած մի սիրաերգ,
Քաղցր, անկեղծ, հովուական...

Նա երգում էր ազատ, յուզուած,
Սէրն աղջկայ կոյսընափր.
Նրա երգին՝ գովըին՝ ապշած՝
Ծաղիկներն էին ունկնդիր...

Եւ ահա վաղ արշալոյսին
Լեռան ծաղկեայ կատարից՝
Գեղ հովեւհին կուժն ուսին
Զուր էր տանում աղբիւրից...

Նա ջրով լի կուժն ահազին՝
Իջեցրեց իւր ուսից,
Եւ նստելով հովուի կողքին՝
Սրբեց արցունքն աչքերից...

Սկսուեցաւ մի նոր համերգ,
Մի նոր հանգէս լեռնային,
Եւ միմեանց մեկնելով ձեռը,
Երգում արին սիրային...

Իսկ բազմերանդ ծաղիկները՝
Նրանց շուրջը բոլորուած,
Երգում էին նրանց սէրը՝
Զորս բոլորը պար բանած...

ՔԵԶ ՄՈԾՅԵՄ ԳԱԼԻՍ...

(Նուէր հայ գիւղացուն)

Քեզ մօտ եմ գալիս իմ վառ յոյշերով,

Ո՞վ դու գիւղական վեհ աշխատաւոր,

Քո հին իւրճիթում խարխուլ պատերով,

Վիշտու մոռնալու, վիշտու դարաւոր...

Քո խաղաղ կեանքին կարօտ իմ հոգին՝

Ո... կուզէ թռչել, թռչել դէսի քեզ,

Դէպի՛ քեզ. տալու հանգիստ իմ մարմին,

Տանջուած, հիւծուած ցաւերով պէս-պէս...

Քեզ մօտ եմ գալիս կեանքից ձանձրացած

Հեռու էս անսէր, օտար աշխարհի՝

Անսիրտ մարդկանցից խապառ մոռացուած,

Անվերջ հալածուած, կուրծքս վշտալի...

Ու քեզ հետ կուզեմ հայրենի երկրում՝

Ապրել ու գործել, դաշտերում ազատ,

Քո քաղցրահնչին երգդ իմ հոգում

Թող կրկին հնչէ, ով իմ հարագատ...

Քեզ մօտ եմ գալիս ով վսեմ տիպար,

Ո՞վ հլու սարուկ դու անկեղծութեան,

Քեզ մօտ եմ գալիս քրտինքով արգար՝

Բանալու ճամբան, սուրբ ճշմարտութեան...,

Քեզ մօտ եմ գալիս, որ չըմոռանաս,

Նորից ձեռք առնես քո մաճն ու արօր,

Հայրենի հոգիդ որ ընկեր մնաս

Չըթողնես կեանքդ խաղաղ ու անդորր.

Քեզ մօտ եմ գալիս ես արի հոգով՝

Հիւսելու կեանքի փառաւոր պսակ,

Սիրտս լի գարնան սոկէ յոյսերով՝

Գալիս եմ քեզ մօտ, անձնուէր մշակ...

Ա Շ Ո Ւ Ն

Աշունն եկաւ նորից, մռայլ, մթնաշնդ,

Ցուրտաը նորից պատեց շուրջս մահաշունչ,

Նորից վիշտը ինձ համակեց սիրտ մաշող,

Գարնան օրերն, ախ, վչեցին վերջին շունչ...

Աար ու ձորեր, գաշտ ու անտառ, արօններ՝

Ամայնացան, ծառ ու տերե գալկացան,

Էլ չէ ժպտում մեզ արևը կենսաբեր՝

Յօղ ու ծաղիկ մեզ ժպտացին ու անցան...

Ու պարտուած տերմները ծառերի՝

Հա կը թափուկն խոնաւ գեանին, գլխիկոր,

Ու սառ քամին, ուժգնօրէն, կատաղի՝

Կըցրէ այն մութ անկիւններն հեռաւոր...

Ու մնացին օրերն ամպոտ ու գունատ՝

Որ կանձրեն ու կըսգան տխրամած.

Աշուն է, ախ.. սրտիս նման յուսահատ՝

Որ կափսոսայ երազ օրերն իր անցած...

Ուր մնացին անցած օրերն երազկոտ՝

Որ երբեմն կուտային հոգուս տենչ ու սէր,

Ուր մնացին այն ծիծեռներն ինձ ծանօթ՝

Որ ականջիս կը մրմնջային նոր յոյսեր...

Չըկան նոքա, չըկան, անցան, գնացին,

Անապատ է այժմ շուրջս ամայի.

Խենթ հողմերի հառաչանքը տիրագին՝

Կըհեծեծէ որպէս գուժկան սե մտհի...

Աշունն եկաւ նորից, մռայլ մթնաշնդ,

Ցուրտաը նորից պատեց շուրջս մահաշունչ,

Նորից վիշտը ինձ համակեց սիրտ մաշող,

Գարնան օրերն, ախ, վչեցին վերջին շունչ...

Յ Ռ Յ Մ

Կանցնի ձմեռ, կըգայ զարուն կենսաբեր՝
Ծաղկանց բուրմունքն կըտարածուի ողջ աշխարհ,
Կոռւնկները մեծ շարքերով խաբրաբեր՝
Նորից կըգան սէր երգելու մեզ համար...

Սար ու ձորեր կը զարդարուին հարսի պէս,
Ճող ու ծաղիկ հովի շնչով կօրուուին,
Կըբացուի մեզ մի նոր կեանքի նոր հանդէս,
Ու հովիւը կածէ կըկին իւր շուին...

Արա ու արօս կըկանաչին վերսափին՝
Կըբացուի նոր աշխատանքի ասպարէզ,
Ու դաշտ կիջնի նորից չարքաշ գիւղացին՝
Դէմքին ժաղիտ, սիրոն յոյսերն լի պէս-պէս...

Ծիծեռները պիտի ճախրեն օդի մէջ՝
Թռչկոտելով ծաղկից-ծաղիկ՝ ծառից-ծառ,
Ողջ բնութիւնը պիտ ցնծայ սիրատենչ
Ուր ես, օ... իմ սիրուն գարուն յուսավառ...

Կանցնի ձմեռ, կըգայ զարուն կենսաբեր՝
Ծաղկանց բուրմունքն կըտարածուի ողջ աշխարհ,
Կոռւնկները մեծ շարքերով խաբրաբեր՝
«Ազատութեան» լուր պիտ բերեն մեզ համար...

❖❖❖

ԴՕՂԱՆՁԵՑՔ ԶԱՆԳԱԿՆԵՐ...

Դէն, զօղանչեցէք զանգակներ ուժպին՝
Մարտի հրաւեր կարդացէք հային,
Նախախնամութեան Աթոռի տուա՞ն
Հայոց հարցն է դրուած ցաւատանջ...

Հայոց հարցն է, որ արտասուբով,
Դաբերի կոծով, հառաչանքներով,
Ու աղերսանքով՝ չէ լուծուել երբէք,
Ճնշել է միշտ մեր սիրար վշտաբեկ...
Մեր սար ու ձորեր արեամբ ողողուած՝
Գետերն արիւնան... այս ինչ է Աստուած,
Միթէ սըգաւոր մեր երկրի վրայ՝
Միշտ մահը պիտի շըջէ ու ողբայ...:
Այս ինչ է արդեօք... մեր երկիրն տւեր՝
Մենք քաղցած ու մերկ, պանդուխտ թշուառներ,
Անդութ տաճիկից ընդմիշտ հալածուած՝
Օտարից իսպառ, իսպառ մոռացուած...
Տարիներ անցան, գարուն չըտեսանք,
Չունեցանք ուրա՛խ, անհող, խաղաղ կեանք.
Վեհ արշալոյսի շողերը պայծառ
Մեր երկրի համար մնացին օտար...:
Մնացինք օտար և մենք աշխարհին,
Օտար ու կարօս կեանքի վայելքին.
Ու հարցը հայոց հիւծուած, ցաւատանջ
Մերթ յասաջ եկաւ, մերթ տուեց հահանջ,
Ու միշտ անվըճիս, միշտ անմիխթար՝
Միշտ մնաց խաւա՛ր, անյաշյա մեզ համար...
Ու այսօր կըկին ձեռք-ձեռքի տուած՝
Անարդ թշնամուց կըկին հալածուած
Հնկել ենք ճամբա՛յ, ընկել սար ու ձոր
Զըգիտենք, մւր ենք գնում գլխիկոր...
Հօղանջեցէք, շնւա, զանգակներ ուժգին՝
Ոյժ ու սիրտ տուեք վշտահար հային,
Պաշտպանուել, կոռուել, կոռուել ու կոռուել,
Կոռուից է կախուած լինել-չըլինել...
Հասել է ժամը կոռուի վերջապէս,
Հայոց հարցն եկել է նորից հանգէս,
Հօղանջէք ուժգին «հայեր, միացէք

Զինուած, պատրաստուած յառաջ ընթացէք.
 Թողէք լաց ու կոծ, խնդրանք, պաղատանք,
 Հէրիք է տանիք զրկանք, անարգանք,
 Նետուէք ասպարէզ, կոսուի լայն դաշտում՝
 Վրէժի ուխտը վառուած ձեր սրտում,
 Նենդ թշնամու հետ, անգութ-դարաւոր՝
 Մաքրելու հաշիւ, կուռում ահաւոր..
 Զեր բազկի ուժով տարէք յաղթութիւն,
 Զէնքով ձեռք բերէք դուք աղատութիւն:
 Օ... զէնքով, այս, զէնքով պիտ վճռել՝
 Հայոց հին հարցը՝ լինել—չըլինել.
 Զէնքով պիտ միայն գտնինք փրկութիւն,
 Նոր կեանքի գարուն բաղդ ու ցնծութիւն...
 Մօտ է արշալոյս ձեր մոայլ կեանքի՝
 Ցըւում են ամպերն ահա երկնքի,
 Ու կոունկները՝ չւում են երկիր
 Նոր լուր տանելու հային տարագիր...»:
 Դէս դօղանջեցէք զանգակներ ուժգին՝
 Մարտի հրաւէք կարդացէք հային,
 Նախախնամութեան Սթոռի առաջ՝
 Պիտ լուծուի հայոց հարցը ցաւատանջ...



Կ Ո Ւ Զ Է Ի

Կուզէի որ արար-աշխարհ
 Ցաւ ու տանջանք մոռանար,
 Ու վայելէք երազ կեանքի
 Վառ ժամերը բերկրանքի...

Կուզէի որ վերաշխնուէք
 Վիշտը որտի մեր աւեր,

Հառաչանքը կորչէք բեկ-բեկ՝
 Լսուէք անուշ տաղ ու երգ...
 Կուզէի որ վերաշխնուէք՝
 Հայրենիքը մեր աւեր,
 Ու եղբայրս պանդուխտ, անտուն՝
 Վերադառնար նորից տուն:
 Բուրմունքն անուշ ծաղիկների՝
 Կուզէի շնչով զեփիւոի
 Տար մեր կեանքին երջանկութիւն,
 Մեր ցնւրտ սրտին ջերմութիւն...
 Կուզէի որ արար-աշխարհ
 Ցաւ ու տանջանք մոռանար,
 Շնչէք ազնտ, ուրախ գրկէք
 Վառ երազներ, տենչ ու սէր...



ՀԱՆԳՉՈՒՄ է ՀՈԳԻՄ...

Հանգչում է հոգիս արշալոյսի հետ
 Ցնորք-երազիս մուշ-անուշ գրկում՝
 Խաղաղ ու անգորը, քնքոյշ սրտիս հետ,
 Իմ սէր-փէրին է գգւում, համբուրում:
 Նիրհում եմ խաղաղ... և իմ ականջին՝
 Հանում է անուշ մի վառ մեղեղի,
 Եւ անմահական բուրմունքն իմ չորս դին՝
 Խնկում է անուշ, թարմ ծաղիկների...
 Զեփիւոը հեղիկ, շոյում է քնքուշ՝
 Երփներանգ ծաղկանց սիրուն շարանքին,
 Լսում եմ գայլայլը սոխակի անուշ,
 Ցնծում է անվերջ, հըճւում իմ հոգին...

Ահա տեսնում եմ այնտեղ իմ գիմաց՝
Մի երանաւէտ վարդերի աշխարհ,
Ահա իմ փէրին, գալիս է կամաց՝
Վարդ ու համբոյք է բերում ինձ համար...

Մօտեցաւ նա ինձ, ժպտադէմ ու լուս,
Ու սէր շշնջաց նա իմ ականջին,
Փարուելով կրծքիս զբոշմեց մի համբոյք՝
Իմ պատանեկան ջերմ շրթունքներին...

Հանգչում է հոգիս արշալոյսի հետ
Օ՛... իմ փէրիիս մուշանուշ գրկում,
Ե՛խ... ինչքան լաւ է այսպէս միշտ, յաւէտ
Սպրել ու նիրհել երազ-ցնորքում...



ԶԱՐԹԻՐ ԻՄ ՍԻՐԾ

Սիրսս է յուզւում, ալեկոծւում ծովի պէս՝
Միշտ հառաչում. ի՞նչ է ուզում, չըգիտիմ.
Որպէս գիշեր, խաւար, մոայլ ու անտես՝
Լուռ անքում է, նզովք կարդում բաղդիս գէմ...

Գարուն, ծաղիկ, պայծառ արե ու լուսին
Չեն գրաւում հրապոյըը իմ սրտի,
Ո՞վ է արդեօք հարուած տուել իմ սրտին,
Ով ինձ մատնեց անվերտարձ խաւարին...

Եղբայրներիս վիշտը նրան ծանրացաւ,
Թէ քոյըրերիս արցունքները ծովացած,
Թէ կարօտը հայրենիքիս—վիշտն ու ցաւ
Կրկին յիշեց, նա, վաղուցուան մոռացուած...

Կամ թէ փէրին անսէր թողեց ու գնաց
Չըգուրդուրեց, չըգուրդուրեց իմ սրտին.

Ե՛խ... ինչու նա այսպէս սպւոր միշտ մնաց,
Երնէկ աալով անցած ուրախ օրերին...

Ե՛խ, մինչև եզր այսպէս մաշուխս, տառապիս՝
Բաւ է, զարթիր, ցնծան անհոգ, այ իմ սիրտ,
Թէ չէ կեանքի անտակ ծովում կը սուզուիս,
Ես կըմնում քար-անզգայ ու անսիրտ...



ՄԵԿ ԷԼ ՑԻՇԵՆՔ

ՄԵԿ ԷԼ յիշենք մեր անցեալը արիւնոտ,
Խորասուզուինք մտքերի մէջ մոայլուած.
ՄԵԿ ԷԼ յիշենք անցած օրերն մեր ցաւոտ,
Սրցունքները մեր աչքերի ծովացած..

ՄԵԿ ԷԼ նայենք անցած ուղին գիածածկ,
ՄԵԿ ԷԼ զգանք գասնութիւնը մեր կեանքի,
ՄԵԿ ԷԼ տեսնենք մահուան ցանցի մենք հիւսուածք,
Ուր մեր հողին մատնուեց յաւերժ տանջանքի...

ՄԵԿ ԷԼ նայենք մութ անցեալին սպաւոր՝
Ուր դարերով գալարուեցինք անդագար,
Ուր չըահսանք կեանքի զարուն փառաւոր,
Արե-լուսին միշտ մնացին մեզ խաւար...

ՄԵԿ ԷԼ նայենք բանտերից ներս թիւրքական՝
Հերոսների լուս գէմքերին դալկահար,
Որոնք մեռան ի սէր ազգի փրկութեան,
Ազատութեան ուղի բացին մեզ համար...

ՄԵԿ ԷԼ յիշենք ու յուշերը մեր տխուր՝
Վերջին անգամ թող մեզ կարդան նախատինք,
Եթէ մնանք թշնամու գէմ հիմա լուս,
Ստրկի պէս անզէն, սգանք, արտասուխնք...

ՄԵԿ յիշենք ու մոռանանք դասնութիւն,
Թող մութ մնան սոսկումները ահաւոր.
Նոր ոյժերով դիմենք դէպի փրկութիւն,
Դէպի ազատ, դէպի նոր կեանք լուսաւոր...



ՎԻՇՏ ԻՄ ՀԵՌԱՑԻՐ...

Վիշտ իմ հեռացիր, սիրտս սգաւոր՝
Թող ժպտա գարնան գալուստը կրկին,
Թող տանջուած հոգիս վայելէ անդորր,
Սիրոյ երգն հնչուի թող իմ ականջին...

Փշերը ճամբիս թող անհետանան,
Թող ժպտայ դէմքիս երկինքը կապոյտ.
Ու ծիծեաները հիասքանչ գարնան,
Երգեն ինձ օրօր ուրախ ու անփոյթ...

Եղբօրըս սրտից թող էլ չըլսեմ
Բողոքը ընդդէմ անիրաւ կեանքի,
Քրոջս աչերին թող էլ չըտեսնեմ,
Արցունքը թախծի ու հառաչանքի...

Հայ շինականի ժանգոտ գերանդին,
Թող փայլէ նորից դաշտերում դալար,
Թող նոր լոյս ծագէ մեր խաւար կեանքին
Մի նոր արշալյս մեր հոգու համար...

Ու ազատութեան փողը մարտիկի,
Թող հնչէ ազատ սուրբ կոռուի դաշտից
Թէ՝ «ըաւ է ննջէք, շնւա ելէք ոտքի
Փրկութիւն բերինք ձեր արիւնից»...

Փրկութիւն... որին գարերով աենչած,
Երազել էք դուք, անքուն, անհանգիստ,

Ու արեան ծովով դիմել տոգորուած,
Գանելու կեանքին ձեր նաւահանգիստ...

Վիշտ իմ, հեռացիր, սիրտս սգաւոր,
Թող ժպտայ գարնան գալուստը կրկին,
Թող տանջուած հոգիս վայելէ անդորր,
Փարուած փրկութեան վառ արշալոյսին...



ԶԵՐ ԴՈՒԹՆ ԵՆՔ ԾԵԾՈՒՄ...

(Եռուկր հայ ունկորին)

Զեր գուռն ենք ծեծում մեր հարազատներ,
Արնաքամ, անտուն, սև հացի կարօտ,
Հէրիք է մնաք անսիրտ, անտարքէր,
Ա՛խ, մի ճար արէք մեր սրտին եարոտ...

Մեր կեանքին հաստւ վաղաժամ գիշեր,
Ու կորաւ ճոմբան քաղցր վայելքի,
Արնաքամ կուլանք մենք անտուն-անտէր,
Ենթարկուած քաղցի, ցաւի, զրկանքի...

Մեր վաթանն եղաւ մեզի գերեզման,
Մեր սար ու դաշտեր արեան անհուն ծով,
Ո՞վ սլիտ ամոքէ մեր վիշտն անսահման,
Մեր սիրտը խոցուած թշնամու սրով...

Հրդենն է լավում շէնքերը սիրուն՝
Գեղեցկահոչակ մեր հայրենիքի,
Լոել է արդէն զօղանջը հնչուն՝
Եկեղեցական վայլուն գանգերի...

Եորդյօն ենք իրար, չըկան հայր ու մայր,
Զարաշուք ճամբին, ախ, քաղցից մեռան.
Ուր են հարս, աղջիկ, ուր են քնյը, եղբայր,
Ովկ գիտէ, մեռան, թէ գերի ընկան...

Չըկայ ոչ մի լուր. . թողինք ամեն ինչ,
Անողորմ բաղդի քմահաճոյքին՝
Ու ընկանք ճամբայ զիշերով ահջինջ,
Ցնցոտիները միայն մեր հագին...

Կար մի ժամանակ մենք էլ ձեզի պէս,
Վայելում էինք սէր, երջանկութիւն.
Իսկ այսօր, հիւծուած ցաւերով պէս-պէս՝
Գլուխ գնելու չունինք մի անկիւն...

Չեր գուռն ենք ծեծում մեր հարազատներ,
Արնաքամ, անտռւն, սև հացի կարօտ,
Լսեցէք, ախ մեր վիշտն, հառաչանքներ
Մի դարման արէք մեր սրտին եարոտ...



ՄՕՏ Է ՆՈՐ-ՏԱՐԻՆ...

Մօտ է նոր տարին, նոր արշալոյսի
Վառ ճաճանչները կըփայլեն շուտով,
Ու հայի համար նոր փայլուն յոյսի՝
Երե կըծագէ մի նոր ժպիտով...

Մեր երազները անցած օրերի՝
Գիտեմ, պիտ շուտով իրականանան,
Ու հովհանները սև արցունքների՝
Պիտի ծաղկաշատ նոր դրախտ դառնան...

Սարսափը մահուան պիտ հին տարուայ հետ՝
Լաց ու հառաջանք իրենց գիրկն տուած՝
Գնան, հեռանան ու կորչին յաւէտ,
Խաղաղութիւնը պիտ բազմի փառաց...

Մօտ է նոր տարին... պիտ վերածնուի
Մեր հոգում կրկն սէր ու խնդութիւն,
Աւեր աշխարհը պիտ վերաշինուի
Պիտ մեզ խորի մնան անէծք ու արիւն...

Ու մեր թշնամի տաճիկն անիրաւ՝
Պիտ ընկնի ճամբայ, պարկը շալակին.
Իւր հետ տանելով արիւն, լաց ու ցաւ՝
Խնդութիւն ու սէր պիտ թողնի հային..

Մօտ է նոր-տարին, նոր արշալոյսի
Վառ ճաճանչները կըփայլեն շուտով,
Ու հայի համար նոր փայլուն յոյսի՝
Երե կըծագէ մի նոր ժպիտով...



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

№	Երես
1. Իրականացէք ոսկի երադներ	5
2. Ղարիբ անցորդին	6
3. Կռուիր հայ զինուոր	7
4. Հրաժեշտ	8
5. Էլի այնպէս	9
6. Ճանապարհ տուէք	10
7. Արծուի վիշտը	11
8. Քնարիս	13
9. Պանդուխտի վերադարձը	13
10. Դոնի ափին	14
11. Հայրենիքիս	15
12. Նըան	16
13. Գիւղը	17
14. Բանտում	18
15. Եկէք ինձ մօտ	19
16. Նահատակներին	20
17. Հզօր հս	21
18. Ասա ինձ, դու չե՞ս	21
19. Ես մէկին գիտեմ	22
20. Երգչին	23
21. Ամառանոցում	24
22. Թողէք ինձ մհնակ	25
23. Ինչ նուիրեմ քեզ	26
24. Ինձ մի կանչիր	26
25. Ես սիրում հմ	27
26. Ինչո՞ւ	28
27. Միայն սիրիր ինձ	29

ՀՊ. 4-532_a

28. Հովուի սէրլ	30
29. Քեզ մօտ հմ գալիս	32
30. Աշուն	33
31 Յոյս	34
32. Լողանջեցէք զանդակներ	34
33. Կուզէի	36
34. Հանդչում է հոգիս	37
35. Զարթիր իմ սիրտ	38
36. Մէկ էլ յիշենք	39
37. Վիշտ իմ հեռացիր	40
38. Զեր զուռն ենք ծիծում	41
39. Մօտ է նոր տարին	42



304

2013

14011

Mark

4-53